

## ՄԱՅՐ ԱՔՈՌՈՅՑՆ ԴՈՒԷՐՆ ԱԳՈՒԼԵԱՅ ՎՆԱՍՈՒԱԾՆԵՐԻՆ:

Ագուլիսի Հեղեղի գոյժը Ս. Էջմիածին հասած լինելով՝ Սինօղը չընայելով Մայր Աթոռոյս գրամական անձուկ դրութեան, թշուառացիոց փշտը ամբիկու համար անցեալ Յուլիս ամսին հինգ հարիւր բուրլի ու զարկեց յանուն Ագուլիաց վնասուածներին նպաստելու համար կազմած յանձնաժողովին, յորգորելով որ Յանձնաժողովը աշխատէ ամենայն եռանդեամբ և արդիւնաւորութեամբ շարունակել նպաստահաւաքումն կարօտեալներին օգնելու և սփոփելու համար:

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Յաւօր սրտի կարգացիւնք «Մշակ» 65 համարում «իմ բացատրութիւնս» վերնագրով տառջնորդող յօդուածը, որով լեկրթի խմբագիրը համառօտակի յիշելով իւր կայքերի և կալուածների գրաւիլը պարտի տեղ՝ յայտնում է որ Մշակը գոնէ երկու ամսով գաղարկու է: Յօդուածը վերջանում է հետեւեալ վհատական խօսքերով «տասն և երեք տարուայ գրական գործունէութիւնից յետոյ Լայոց հասարակութեան համար, այժմ կարցնելով իմ ամբողջ կարողութիւնս, այս բօլետիս ինքնիրան հարց է առաջարկում թէ Մշակի գոյութեան և թէ իմ անձնական ապրուստի մասին»:

Սինօղը Բարսի գործակալի տարւոյս Մարտի 30 ին յայտարարութեան հետ սաացաւ նոյն քաղաքի բնակիչ Պ. Խաչատուր Վիրիւանից 10 բուրլի, ի նպաստ ճեմարանի: Յիշեալ պարոնը խոստացել է նոյն քանակութեամբ նուէրը շարունակել այսուհետեւ ամեն տարի:

Աստուած ի հաճոյս իւր ընդունի յիշեալ պարոնի նուէրը և փարձատրէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ:

Ստացանք Սինօղից հրատարակելու հետեւեալ նուիրատուաց ցուցակը, որ յանուն ճեմարանի անվաճառ մնացած նուիրատուների հետ Տփլիսիցի Արթ. Ներսէս քահանայ Ղամազեան անցեալ Դեկտմ. 22 ին ուղարկել է Սինօղին:

|                                    | Բ. |
|------------------------------------|----|
| Պ. Յարութիւն Պետրոսեան Լախիբեռեանց | 25 |
| Պ. Յովսէփ Պատեանց                  | 5  |
| Օրիորդ Ուսանայ Արքսեան Ալեքսանեանց | 5  |
| « Կատարինէ                         | 5  |
| Պ. Աղեքսանդր                       | 5  |



|                                         |   |
|-----------------------------------------|---|
| Պ. Մարտիրոս Մաղաւաղեանց . . . . .       | 5 |
| Պ. Միքայէլ Ղամաղեանց . . . . .          | 5 |
| Պ. Ասլան Թուշեանց . . . . .             | 5 |
| Պ. Յարութիւն Ասրեանց . . . . .          | 5 |
| Պ. Աղէքսանդր Թուշուրեանց . . . . .      | 5 |
| Պ. Աւետիք Եղիազարեանց . . . . .         | 5 |
| Պ. Եփրեմ Բիգիջեանեանց . . . . .         | 5 |
| Պ. Յարութիւն Եգիգարեանց . . . . .       | 5 |
| Պ. Աղասի Տէր Աստուածատուրեանց . . . . . | 5 |
| Պ. Բժիշկ Յովհաննէս Մարգարեանց . . . . . | 5 |
| Ներսէս քահանայ Ղամաղեանց . . . . .      | 5 |

100

Հրատարակելով սոյն ցուցակը յայտնում ենք շնորհակալութիւն  
ստիքատու անձանց:

Ըննդոյս II ին, Սրբոյ Էջմիածնի Հոգակաթի տօնին, Մայր Աթոռոյս  
Միաբանութիւնը ըստ սովորութեան հանգիստաւոր մաղթանք կատարեց  
Ս. պատարագից առաջ:

Թիֆլիզի հայ լրագրները գուժեցին Աւարժարան ամսագրի դադարումն, Աւարժարանի դադարման առաջքը առնելու համար Պ. Յ. Գեղամեանի հրաւիրմամբ Մեղուի խմբագրատանը ուսուցիչներից ոմանք  
հոգով են կազմել, ուր լմեր և դէմ խօսակցութիւնից յետոյ, որոշել են  
ստորագրուել Աւարժարանին և ստորագրել տալ օրիշներին. այս ժողո-  
րին մասնակցողներից մինը Նոր Դարի մէջ յայտնումէ մօտաւորապէս  
հետեւեալ միտքը.

—Աւարժարանի դադարումն բնական է, որովհետեւ Աւարժարանը չէր  
հետաքրքրւում հայ վարժարանով և վարժապետներով, այլ տպումէր  
իւրիստոփայական յօդուածները:—

Մենք հետեւել ենք Աւարժարանին և խղճով կը խոստովանենք որ թէև  
Աւարժարանը չէ հետաքրքրուիլ հայ վարժապետով և վարժարանով,  
բայց տուել է ընտիր յօդուածներ, որոնցից մեծ օգուտ կարող էին քա-  
ղել հետաքրքիր ընթերցողները:

Մեր քաղաքական և այլ լրագրները գանգատվում են բաժանորդների  
որով և նիւթականի անգոհացուցիչ լինելու պատճառով. մենք բնական  
էինք համարում այդ լրագրների բաժանորդների սակաւութիւնը, որով-  
հետև հայ ուսումնականը իւր պատուին կէք չէ անում հայ լրագիր  
կարգալի, նա եթէ կարդում է, օտար լրագրներ է կարդում. հայ վա-  
ճառականը արհեստաւորը և այլ դասակարգի մարդիկ առարկելով իրանց  
հազիւ գրագիտութիւնը և միջոց չունենալը, չեն ստանում հայ լրա-  
գիր, ի՞նչ պատճառ ունին ուսուցիչները, որ իրանց մասնագիտու-



Թեան վերաբերեալ թերթին ապահովութիւն չեն տալիս բաժանորդ գրուելով և կարգաւով:

Եթէ ասէն հայ վարժապետով և հայ վարժարանով չէ հետաքրքրվում ամսագիրը, իրանք ինչո՞ւ հայ վարժարանի և վարժապետի մասին չեն գրում: Եթէ իրանք չեն գրում՝ ուրեմն թող ուրիշներին չը մեղադրեն:

Եթէ ասէն մի տեսուչ Պ. Գ. Յովհաննիսեանի պէս հետաքրքրուէր իւր ստանձնած պաշտօնով և այնպիսի տեղեկագիր տպէր մանկավարժական թերթում, որպիսին տեսնում ենք Արձագանք շաբաթաթերթում տպած՝ Ալէքսանդրապոլի միժակային գլորոցի համար, և եթէ ցանկութիւն լինէր այդ տեսակ տեղեկագիրները կարգաւ և օգուտ քաղել՝ մանկավարժական թերթը լինի Արձագանքի կամ այլ ամսագիր, չէր դադարի:

Իսկ մենք՝ քնտկան ենք համարում մեր մանկավարժական ամսագրերի դադարումը, որովհետեւ հայ վարժապետը իւր իսկական պարտաւորութիւնից աւելի՝ հետաքրքրվում է հասարակական խնդիրներով, և նորա ժամանակը խլում են այն թղթակցութեանց կարկատումները, որոնցով լցնում են հայ թերթերը՝ իրանց անհաճելի մի որ և է երեւոյթ քննադատելով, միայն որ այդ երեւոյթը չը լինէր զուտ մանկավարժական:

Նորա, այդ վարժապետները, պարտաւոր են հոգարարձններին քննադատել՝ նոցա անհոգութեան և շահասիրութեան համար, երեսփոխանին դատապարտել՝ եկեղեցական գումարները վատնելու համար, քահանային դատափախել՝ իւր պարտաւորութիւնը չը կատարելուն համար, յաջորդին և առաջնորդին դատապարտել՝ իւր անհոգութեան և անհասկացողութեան համար, իսկ ուսուցչին՝ յօգուածագիր ուսուցչի կարծիքով՝ նորա անձնաւորութիւնը նախնական է, նորա պարտազանցութիւնները՝ անմեղադրելի: մեղք է նորա պաշտօնավարութեան թերութիւնների վերայ մասնանիշ լինել, որովհետեւ ուսուցիչը հայ անապատացած կեանքի ոճաղիսն է, նա այն աղբիւրն է, որով պիտի ռոպուեն հայ ազգուհն տունկերը: Յօգուածագիր ուսուցչի կարծիքով ուսուցիչը կենցաղակրթութեան առաքեալ է, որ լոյս և գիտութիւն տարածելու կոչում լինելով՝ վայրագար հալածվում է տգէտ և անբաժան և իրանց կոչման նշանակութիւնը չը հասկացող իշխանաւորներից, Հայ ուսուցիչը հասարակական խնդիրներով է զբաղվում, ահա թէ ինչու հայ մանկավարժական թերթերին չի յաջողվում երկար գոյութիւն ունենալ:

Քանի որ մեր մէջ կոշկակարը խոհարարութիւն է անում, իսկ խոհարարը կոշկակարութիւն, ոչ մի բան չի յաջողիլ, և քնդհակառակը ամենայն բան ձախող ընթացք պէտք է ստանայ: